քի ռադիոածխածնային լաբորատորիային ներկայացված գերանի բեկորը, ամրոցի արտիդավոր սենյակի արևելյան պատի գոտն բացվածքից, թվագրվել է մ. թ. 500 թ. (±50 տարի)[17]։

Ինչ էլ որ լինի, Հացավանի հին ամրոցը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում միջնադարյան ամրոցաշինարարության, կլոր աշտարակներով սժռված ամրոցների ծագման համար, ինչպես նաև քիչ ուսումնասիրված՝ ուշ անտիկ և վաղ միջնադարյան նյութական մշակույթի բնութագրման համար։

Գ. ՏԻՐԱՏՅԱՆ

ԹԵՂՈՒՏԻ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ (1965 Թ.)

Թեղուտի հանդամասը, որն ընկնում է էջմիածին քաղաքից երեք կիլոմետր հարավ, հնագիտությանը հայտնի էր որպես վաղ, միջին և ուշ բրոնզի ժամանակաշրջանի հետաքրքիր հուշարձաններ ունեցող վայր։

Վերջերս Թեղուտի հնագիտական կոմպլեքսը համալրվեց շատ արժեքավոր մշակութային նոր հուշարձանի հայտնաբերումով, որն իր տեսակի մեջ Սովետական Հայաստանի տերիտորիայում առայժմ միակն է։

Այդ նորահայտ բնակատեղին գտնվում է ՀՍՍՀ ԳԱ երկրագործական գիտահետազոտական ինստիտուտի փորձադաշտի հարավ-արևմտյան անկյունում, ոչ շատ բարձր բլրի վրա։ Բնակատեղին նախապես ունեցել է 2—2,5 հա տարածություն, իսկ այժմ նրա մի մասն է մնացել։

Բլրի մակերեսը ծածկված է 30—40 սմ հաստություն ունեցող ամուր կավաշերտով, որի տակ՝ 1—1,5 մ հաստության փխրուն կավահողի շերտում տեղավորված է աղյուսապատ և գետնափոր կացարանների հորիզոնը՝ նստած 2,5 մ հաստության գետային խճաքարի շերտի վրա, այնուհետև մայր հողն է՝ կավային նրստվածքներով։

Շերտագրական տեսակետից կացարանները կառուցված կամ փորված են վերևից երկրորդ շերտի մեջ, Քասաղ գետի երկրորդ գետահունի վրա (այժմյան հունը չորրորդն է)։

Բնակատեղիի պեղված 8 կիսավեր և ամբողջական կացարանները մեկ առանձին կամ մի քանի կլոր հատակագծով բնակարանների կոմպլեքսներ են, որոնք տեղավորված են իրարից 5—7, որոշ դեպքերում՝ 0,7 մետր հեռավորության վրա։

Պեղված կացարանների ներքին տարածությունները լցված են մոխրի հետ խառնված փափուկ հողով, որի միջից հայտնաբերվեցին կայծքարե, վանակատե (օբսիդիան), բազալտե գործիքներ, ինչպես նաև ոսկրե ու խեցեղեն առարկաների բազմաթիվ բեկորներ։

Թեղուտի հյուղակները ունեն կլոր հատակագիծ՝ 2,6—3,5 մ տրամագծով, պատերը շարված են հարդախառն կավից պատրաստված ուղղանկյուն հարթ աղյուսի մի շարքով, որի հաստությունը չի անցնում 30 սմ-ից։ Աղյուսները ունեն 30×40×10 սմ չափսեր։ Բնակարաններին կից կառուցված են կլոր հատակագծով օժանդակ շինությունները (1,2—1,5 մ տրամագծով), որոնք ծառայել են որպես ըշտեմարաններ հացահատիկ և այլ սննդամթերք ամբարելու համար։ Բնակարանների հատակները և պատերը ծեփված են հարդախառն կավաշաղախով, որի վրա երբեմն հանդիպում են կարմիր ներկի (օխրա) հետքեր (№ 1 կացարան)։

Ուշագրավ է այն, որ պեղված վայրում չհայտնաբերվեց բնակարանների դռների կրնկաքարեր կամ այդ նպատակով օգտագործված որևէ մի իր, ինչպես նաև շինարարական դետալ։ Բնակարանների մուտքի համար որպես գուռ թերևս ծառայել է եղեգնից, կաշվից կամ ծառի ճյուղերից գործած ծածկոցը։

Յուրաքանչյուր հյուղակի հատակին, կենտրոնական մասում, դրված էր միջին մեծության աշխատանքից հարթված մակերեսով մի գետաքար, որի շրջապատում հայտնաբերվել են քարե և ոսկրե թերի մշակված գործիքների բազմաթիվ բեկորներ։ Շատ ուշագրավ են կայծքարի 13 անավարտ շեղրիկները, որոնք համատեղ հայտնաբերվել են № 7 կացարանում, վերը նշված քարի մոտ։ Այս փաստը հիմք է տալիս ենթադրելու, որ աշխատանքային գործիքները պատրաստվել են կացարանի ներսում, հենց այդ քարի վրա։ Կացարանների մեջ կատարվող աշխատանքային պրոցեսների նման պատկեր են տալիս նաև Նախիջևանի Քյուլ-թափայի առաջին շերտի պեղումները, սակայն հնագետ Օ. Ա. Արիբուլաևը աշխատանքային այդ նախնական «զնդանը» համարում է բնակարանի ծածկը պահող սյան հենաքար[1]։

---

17 Ленинградское отделение Института Археологии АН СССР, Радиоуглеродная лаборатория, образец ЛЕ—667, обр. 365.

1 О. А. Абибулаев, Некоторые итоги изучения холма Кюль-тепе в Азербайджане, «Советская археология», (այսուհետև՝ СА), 1963, № 3, էջ 158։

Պեղումների ընթացքում բնակարանների ներսում հայտնաբերվեցին նաև պատահական գետաքարերից պատրաստված օջախի հետքեր՝ մոխրի, փայտածուխի և այրված ոսկորների հաստ կուտակումով (30—40 սմ հաստ.), ինչպես նաև հարդախառն կավից պատրաստված պաշտամունքային օջախի հենակներ։

Վերը նշած կլոր հատակագծով կացարանների նման կառույցներ հայտնաբերվել են Ղազախի՝ Թոյրե և Շոմու թեփեներում[2], Նախիջևանի Քյուլ-թափայի առաջին շերտում[3], ինչպես և Հին Արևելքի մ. թ. ա. V—IV հազարամյակներով թվագրվող հուշարձաններում[4]։

Ինչպես հայտնի է, կլոր կացարանների տիպն ունի շատ հին շինարարական ավանդներ և առաջացել է օվալաձև հատակագիծ ունեցող գետնափոր կացարաններից։

Հին Երիքոնում աղյուսաշեն կլոր կացարանների սկզբնավորումը գիտության կողմից թվագրվում է նատուֆյան մշակույթի ժամանակաշրջանով (մ. թ. ա. VIII—VII հազարամյակներ)։

Կլոր կացարանների շինարարական ավանդները հետագայում շարունակվում են Հասսունայի մինչհալաֆյան ստորին I[5], Թեփե-Գավրայի XVIII—XVII շերտերում[6], ինչպես նաև Արփաչայում[7] և հյուսիս-օրեյդյան մշակութային ազդեցություն ունեցող հուշարձաններում[8]։

Ինչպես տեսնում ենք, առաջավոր Ասիայի և Հյուսիսային Միջագետքի բնակարանաշինարարական հնագույն ավանդները առկա են եղել նաև Հայկական լեռնաշխարհում, որն ուշագրավ փաստ է Հայաստանի նստակյաց վաղ երկրագործական տնտեսություն ունեցած տոհմերի նյութական մշակույթի զարգացման աստիճանը և բնակարանների կառուցման ձևերը ուսումնասիրելու համար։

Ավելի ուշ, կլոր կացարանների կառուցման ավանդները լայն տարածում են ստանում Հայկական լեռնաշխարհի III հազարամյակի մշակույթում։ Նման կացարանների կատարյալ ձևերը հայտնի են Շենգավիթի, Քյուլ-թափայի, Շրեշբլուրի, Նախիջևանի Քյուլ-թափայի երկրորդ շերտի և բազմաթիվ այլ հուշարձաններից։

Պեղված կացարաններից հայտնաբերված հրնագիտական իրերն իրենց պատրաստման նյութով և ձևերով բազմազան են ու տարատեսակ։ Դրանք քարե, ոսկրե և պղնձե աշխատանքային գործիքներ, խեցեղեն առարկաների բեկորներ են, ընդ որում նաև կավից պատրաստված կենդանու արձանիկ։

Կայծքարե և վանակատե գործիքներ.— Սրանք պատրաստված են կոնաձև միջուկից անջատված շեղբիկներից, կոտրվածքում եռանիստ են կամ քառանիստ։ Թափանցիկ, մոխրագույն, դարչնագույն, ծխագույն երանգներ ունեցող այս դանականման շեղբիկներից մի քանիսը ռետուշված են, իսկ հիմնական մասը զուրկ է ռետուշից։ Վերջիններն ունեն սուր կտրող կողեր, որոնք աշխատանքի հետևանքով բթացել են ու փոքրիկ կոտրվածքներ ստացել (տե՛ս աղ. I, նկ. 1—3)։ 3,4—7 սմ երկարության, 1,5—3 սմ լայնության ամբողջական և բեկորներով ներկայացված շեղբիկները օգտագործվել են տարբեր նպատակներով։ Նրանց մի մասը՝ փոքրերը, ծառայել են որպես պահանգավոր, հավաքովի մանգաղների և գանակների ներդիրներ (աղ. I, նկ. 4—8), իսկ մեծերը՝ որպես առանձին դանակներ (աղ. I, նկ. 9—10)։ Ուշագրավ է, որ հայտնաբերված շեղբիկների մեծամասնությունը պահանգավոր դանակի կամ հավաքովի մանգաղի ներդիրներ են, որոնց կիրառման բնագավառը հիմնականում երկրագործությունն է։ Իհարկե չի բացառվում նաև տնտեսական այլ նպատակների համար նրանց օգտագործումը։

Բազալտից պատրաստված գործիքներ։ Աղորիքներ.— Սրանցից երկուսը գտնվել են բնակարանի ներսում և ունեն սկավառակաձև տեսք (աղ. I, նկ. 11), 20—30 սմ լայնություն, 30—40 սմ երկարություն։ Այս քարերի մի երեսը հարդարված է, հղկված, իսկ մյուս կողմը պահպանում է քարի բնական տեսքը։ Մի այլ, ավելի մեծ չափի աղորիք անկանոն քառանկյունի ձևի, հայտնաբերվեց կացարանից դուրս, բակի մասում։

Վարսանդներ.— Պատրաստված են գետաքարից, ունեն գլանի տեսք. մի ծայրը մշակված է, իսկ մյուսում պահպանված է քարի բնական վիճակը։

---

[2] И. Г. Нариманов, Г. С. Исмайлов, Акстафачайские поселения близ г. Казах, СА, 1962, № 4, էջ 149։

[3] О. А. Абибулаев, նշվ. աշխ., էջ 157։

[4] L. Perkins, The comparative archeology of early Mesopotamia, Chicago, 1957, էջ 16—45։

[5] Lloyd Seton and Safar Fuad, Tell Hassuna, „Journal of Near Eastern Studies", 1945, IV, էջ 272։

[6] Tobler Arthur J., Excavations at Tepe-Gawra, II, Philadelphia, 1950, էջ 41—44։

[7] Г. Чайлд, Древнейший восток в свете новых раскопок. М., 1956, էջ 175։ Ինչպես նաև L. Perkins, նշվ. աշխ., էջ 37—39։

[8] В. М. Массон, Восточные параллели убейдской культуры, КСИА, 1962, № 91, էջ 10։

Աղ. I

Մանրաց նախիչներ.— Սրանք ևս պատրաստված են գետաքարից, ունեն կլոր գնդաձև անիվի տեսք, կենտրոնում արված է հորիզոնական միջանցիկ անցք (աղ. I, նկ. 12)։

Բազալտից պատրաստված գործիքների մեջ առավել հետաքրքիր է բրիչը, որն ունի օվալաձև տեսք։ Նրա երկու երեսները հղկված են, կողերը կորնքարդ, գործիքի վերին լայնացող մասի վրա առկա է մի փոքրիկ փոսիկ, որն արված է, հավանաբար, կոթին ամրացնելու նպատակով։ Դրժրախտարար գործիքը ավարտուն չէ (տե՛ս աղ. I, նկ. 13)։

Թեզուտի քարե ինդուստրիայի անբաժանելի մասն են կազմում նաև հրաբխային խարամից և գետաքարից պատրաստված կոկիչներն ու տրորիչները։ Ն 3 կացարանից հայտնաբերված վանակատե տրորիչը անկանոն ձևի փոքրիկ գետաքար է՝ վրան կարմիր ներկի մնացորդներ։

Ամանները հղկելու և փայլեցնելու համար օգտագործված կոկիչները պատրաստված են ոչ ծակոտկեն քարերից և ունեն խորանարդի ձև։

Թեղուտի քարե ինդուստրիան իր ուղղակի զուգահեռներն ունի Նախիջևանի Քյուլ-Թափայի առաջին շերտում[9], Ղազախի հուշարձանում[10], Վանի մոտ գտնվող Շամիրամալթի բլուր-բնակատեղիում[11], Գեոյ-Թեփեի — M շերտում[12], Պիչիլի-Թեփեում[13], Թեփե-Գավրայի 19—17 շերտերում[14], ինչպես նաև հարավ-անատոլիական ուշ նեոլիթյան և վաղ էնեոլիթյան բնակատեղիներում՝ Մերսին 24—23[15], Չաթալ-Հույուկ[16] և այլն։ Թեղուտի կայծքարե և վանակատե այս տիպի գործիքները ձևերի որոշ փոփոխություններով իրենց գոյությունը շարունակում են Հայկական լեռնաշխարհի III հազարամյակի վաղ բրոնզեդարյան մշակույթում։

Ոսկրե գործիքները պատրաստված են մանր և խոշոր անասունների սնամեջ ոսկորներից, որոնք իրենց նպատակային օգտագործմամբ բաժանվում են երկու խմբի. Երկրագործական բրիչներ, կայծքարե ու վանակատե դանակների պահանգներ և կենցաղային՝ ասեղներ, ծակիչներ, հերուններ, քերիչներ և այլն։ Երկրագործական գործիքներից ուշագրավ է խոշոր անասունի սրունքոսկրից պատրաստված բրիչը, որի մի ծայրում պահպանված է ծայրաճանը (էպիֆիզ), իսկ հակառակ կողմը ջարդված է։ Ծայրաճանից ներքև ոսկորի վրա արված են երեք փոքրիկ անցքեր, որոնք ծառայել են բրիչը փայտյա բռնակին ամրացնելուն (աղ. I, նկ. 19)։

Նմանատիպ ոսկրե գործիք հայտնաբերվել է Աղստևի բնակատեղիում։

Մյուս բրիչը երկարավուն (18 սմ) բարակ շեղբիկ է, որի աշխատող սուր ծայրը բթացել է։ Մյուս ծայրը, որտեղ ըստ երևույթին պահպանված է եղել ծայրաճանը, ջարդված է։ Նման գործիքները կիրառվել են երկրագործական ամենատարբեր նպատակներով (աղ. I, նկ. 20)։

Ոսկրե գործիքների մեջ շատ մեծ հետաքրքրություն է ներկայացնում № 7 կացարանից փոքրիկ հորի միջից հայտնաբերված կայծքարե ներդիր ունեցող պահանգավոր դանակը։ Ոսկրե պահանգի մի ծայրը թեք կտրված է, կայծքարի ներդիրի երկարությունը համապատասխան (7 սմ) կտրվածքով փորված ու խորացված է, որպեսզի ներդիրը տեղավորվի նրա մեջ։ Կայծքարը ոսկրե պահանգի հետ ամրացված է բիտումով։ Պահանգավոր այս դանակը պատրաստված է անասունի կողոսկրից, ունի 18 սմ երկարություն, 5,7 սմ լայնություն (աղ. I, նկ. 21)։

Ոսկրե պահանգավոր ուղիղ դանակը ինչպես Հին Արևելքի, այնպես էլ Թեղուտի երկրագործների կողմից օգտագործվել է որպես կտրող բերքահավաքի գործիք։ Այն օգտագործվել է նաև փայտ, միս, կաշի կտրելու և այլ նպատակների համար։ Ոսկրե բրիչի և այս պահանգավոր դանակի նման գործիքներ հայտնի են իրանական Ադրբեջանի Սոլդուզի հովտի Պիչիլի-Թեփեից[18]։

Կենցաղային գործիքները ևս պատրաստված են կենդանու սնամեջ ոսկորների կտորներից, ունեն լավ մշակված մակերեսներ։ Ոսկրե այս գործիքների մեջ ամենից մեծաքանակը ծակիչներն են։ Սրանց աշխատող ծայրը լավ սրված է ու մշակված, իսկ հակառակ կողմը հաստ է և հաճախ պահպանված է ծայրաճանը։ 5—10 սմ երկարության ծակիչները կոտրվածքում ունեն կլոր, օվալաձև կամ աղեղնաձև տեսք (աղ. I, նկ. 14, 22)։

Ասեղներ.— Սրանց մի ծայրը լավ սրված է, իրանը բարակ է և հղկված, մյուս ծայրը լայն է, թիականման, վրան կա անցք՝ թել անցկացնելու համար։ Ասեղները կտրվածքում կլոր, օվալաձև և քառակող են։ Ունեն 7—10 սմ երկարություն (աղ. I, նկ. 18)։

Շիլասեղներ.— Սրանք իրենց կառուցվածքային ձևով նման են ասեղներին, սակայն վերին թիականման մասում անցք չունեն, կտրվածքում

---

9 О. А. Абибулаев, Раскопки холма Кюль-тепе близ Нахичевани в 1955, МИА № 67, 1959, էջ 449, աղ. I, նկ. 2—4։ Ինչպես նաև նույնի նշվ. հոդվ., СА, 1963, № 3, էջ 159, նկ. 2—4։

10 И. Г. Нариманов, Г. С. Исмайлов, նշվ. աշխ., էջ 150, նկ. I, 4—7։

11 Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 1, Երևան, 1931, էջ 129 և նկ. 34, 10—12։ 37, 17—21։

12 T. Burton Brown, Excavations in Azarbaijan, London, 1948, էջ 227—238։

13 Robert H. Dyson J. R. and Gouler Young J. R., The Solduz Valley Iran: Pisdeli Tepe, Antiquity, 1960, № 133, ներդիր № III։

14 Tobler Arthur J., նշվ. աշխ., էջ 200, ներդիր XCIII 1—4, CLXXXVI 1։

15 J. Garstang, Prehistoric Mersin, Oxford, 1953, էջ 51։

16 J. Mellaart, Excavations at Çatal-Huyük, „Anatolian studies", 1962, vol. XII, 1964, vol. XIV, էջ 106—112։

17 И. Г. Нариманов, Г. С. Исмайлов, նշվ. աշխ., էջ 150, նկ. 1—2։

18 Robert H. Dyson J. R. and T. Gouler Young, նշվ. աշխ., ներդիր III։

նույնպես օվալաձև են և քառակող։ Ունեն 5—8 սմ երկարություն (աղ. I, նկ. 15—23)։

Հեռուններ.— Երկարավուն (8—10 սմ) համահավասար բարակ իրանով, մի ծայրը սուր, մյուսը հաստացող, լավ հղկված ոսկրե այս գործիքները Թեղուտի երկրագործների կողմից օգտագործվել են հագուստ և այլ պարագաներ գործելու համար (աղ. I, նկ. 16)։

Քերիչը պատրաստված է կենդանու թիակոսկրից, ունի երկարավուն օվալաձև տեսք (15×7×0,5), կողերը հղկված են։ Ոսկրե քերիչը օգտագործվել է ինչպես կավից պատրաստված իրերը հղկելու, այնպես էլ կաշին մազերից մաքրելու և չորացման հետևանքով նրա վրա առաջացած կոշտուկները հարգարելու համար։

Թեղուտի ոսկրե այս գործիքներն իրենց զուգահեռներն ունեն ինչպես Հայկական լեռնաշխարհի՝ Ղազախի[19], Նախիջևանի Քյուլ-Թափայի[20], Վանի հուշարձաններում[21], այնպես էլ Իրանական սարահարթի Գեոյ-Թեփե, Պիշիլի-Թեփե[22], Իրաքի ու Հյուսիսային Միջագետքի Հալաֆյան և օբեյդյան հուշարձաններում[23], ինչպես նաև հարավ-անատոլիական Մերսին[24] բլուրբնակատեղիների վաղ շերտերում և բազմաթիվ այլ վայրերում։ Այնուհետև նրանք իրենց գոյությունը շարունակում են վաղ բրոնզեդարյան (քուռ-արաքսյան էնեոլիթյան) տնտեսության մեջ՝ Շենգավիթ, Շրեշ-բլուր, էլար և այլուր-ում։

Բացի քարե և ոսկրե գործիքներից, պեղումների ժամանակ հայտնաբերվեցին նաև պղնձյա իրեր։ Սրանցից երկուսը ասեղների բեկորներ են, իսկ մեկը ոռմբաձև ինչ որ իր է, նման նետասլաքի կամ դանակի շեղրի։

Ասեղների բեկորներից մեկը քառակող է, ունի 1,5 սմ երկարություն, մի կողմը կոտրված է, այդտեղ նկատվում է անցքի հետքը, մյուսը՝ սրված։ Երկրորդ բեկորը կլոր իրանով, մի ծայրը սուր, մյուսը հաստացող ասեղի մաս է, 4 սմ երկարությամբ։

Պղնձյա ոռմբաձև իրն ունի 4 սմ երկարություն, 1,5 սմ լայնություն, ծայրերը նեղ են, կլորացող, իսկ կենտրոնը՝ լայն (աղ. IV, նկ. 3)։

Պղնձյա այս գործիքների քիմիական անալիզները, որոնք կատարվել են Բաքվում պրոֆ. Ի. Ռ. Սելիմխանովի կողմից, ցույց տվեցին, որ դրանց նյութը մաքուր պղինձ չէ, այն իր մեջ պարունակում է մկնդեղային խառնուրդ։ Ստորև բերվում են Թեղուտի քառակող ասեղի անալիզի արդյունքները։

Պղնձե գործիքների առկայությունը Թեղուտի հուշարձանում խոշոր նշանակություն ունի ինչպես Հայաստանի, այնպես էլ Անդրկովկասի վաղ երկրագործությամբ զբաղվող ժողովուրդների տնտեսության առավել կարևոր ճյուղերի ուսումնասիրության համար։ Նախիջևանի Քյուլ-Թափայում[26], Վանում[27], Գեոյ-Թեփեի —Մ շերտում[28], Թեփե-Գավրայի XVIII—XIV դդ. շերտում[29] և Հալաֆյան ու օբեյդյան մշակութային հուշարձաններում նույնպես հայտնաբերվել են պղնձյա փոքրիկ, շատ սահմանափակ թվով իրեր, որոնք իրենց գոյությունով ազդարարում են Առաջավոր Արևելքում մետաղամշակության արշալույսի մասին։ Արարատյան դաշտի կենտրոնում, վաղնջական ժամանակաշրջանի հուշարձանում պղնձյա իրերի գոյությունը ցույց է տալիս, որ նախապատմական խոր անցյալում Արարատյան դաշտը մտել է մետաղագործությամբ

Առարկան	Պարունակությունը տոկոսներով													
	Cu	Sn	Pb	Zn	As	Sb	Ag	Au	Bi	Ni	Co	Fe	Mo	P
Քառակող ասեղ, քաշը՝ 1,7 գր.	հիմնական նյութը	0,02	0,07	—	3,6	0	0,18	0	0,25	0,1	0	0,05	0	0

[19] И. Г. Нариманов, Г. С. Исмайлов, նշվ. աշխ., էջ 150, նկ. 1—2։

[20] О. А. Абибулаев, նշվ. աշխ., էջ 161։

[21] Խ. Սամվելյան, նշվ. աշխ., նկ. 37։

[23] Robert H. Dyson J. R. and Gouber Young, նշվ. աշխ., Ներդիր III։

[23] В. М. Массон, Средняя Азия и Древний Восток, М.—Л., 1964, էջ 236։

[24] J. Garstang, նշվ. աշխ., էջ 41։

[25] Ե. Բայբուրթյան, Աշխատանքային գործիքները Հին Հայաստանում, ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», 1-ին գիրք, 1938, էջ 62։

[26] О. А. Абибулаев, նշվ. աշխ., СА, 1963, № 3, էջ 162, նկ. 4, 1—4։

[27] A. Jenny, Schamiramalti, „Prehistorische Zeitschrift", XIX, № 3—14, Berlin, էջ 293—96։ Խ. Սամվելյան, նշվ. աշխ., էջ 134—36, նկ. 41—45։

[28] Burton Brown, նշվ. աշխ., էջ 216։

[29] Arthur Tobler, նշվ. աշխ., էջ 85։

զբաղվող ժողովուրդների մշակութային արեալի մեջ։

Պեղումների հետևանքով հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդների մեջ ամենից մեծաքանակն ու ամենահետաքրքիրը խեցեղեն առարկաների բեկորներն են, որոնք իրենց կավաշաղախով, պատրաստման տեխնիկայով ու մշակումով տարբերվում են Սովետական Հայաստանի տերիտորիայում մինչ այժմ հայտնի խեցեղենից։ Նրանք շատ կոպիտ են ու հասարակ, պատրաստված են ձեռքով, ունեն դեղին, դեղնականաչավուն, շագանակագույն, ինչպես նաև կարմիրի տարբեր երանգներով մակերեսներ, անհավասար ջերմաստիճանում թրծման հետևանքով ներսի և դրսի մակերեսների վրա առաջացել են գունային տարբեր երանգներ, իսկ միջուկները սև են կամ գորշ, ավելի մոտ կավի բնական դույնին։ Մուգ կանաչ և բաց գույները արդյունք են թրծման բարձր ջերմաստիճանի։

Ըստ կավաշաղախի բաղադրության խեցեղենը կարելի է բաժանել երեք խմբի.

ա) հարդախառն կավից պատրաստված ամաններ,

բ) ավազախառն կավից պատրաստված ամաններ,

գ) մաքուր, որևէ խառնուրդ չպարունակող կավից պատրաստված ամաններ։

Հարդախառն և ավազախառն կավաշաղախ ունեցող ամանների մակերեսները երեսպատված են մաքուր կավով. նրանց մեջ նկատվում են բուսական մնացորդների հետքեր, որոնք առաջացել են թրծման ժամանակ օրգանական նյութերի այրման հետևանքով։ Արտաքին մակերեսները թեև հարդարված են ձեռքով կամ թաց շորով, երբեմն փայլեցված են կոկիչի միջոցով, բայց այնուամենայնիվ անհարթ են և խորդուբորդ, մատերի ու թաց լաթի հետքերով։

Պեղումների ժամանակ թեև ամբողջական կավամաններ չհայտնաբերվեցին, բայց մեծ բեկորների օգնությամբ կարելի է վերականգնել կարասների, տարբեր մեծության կճուճների, խոր և ոչ խոր թասերի, ինչպես նաև կարճ կորնթարդ կողերով, լայն հարթ հատակով տապակարանների ու այլ անոթների ձևերը։

Կարասները պատրաստված են գերազանցապես հարդախառն կավից, ունեն հաստ կողեր, գլանաձև կամ եռակող դուրս ճկված շուրթեր, ուռուցիկ փքուն իրան։ Արտաքին մակերեսները երեսպատված են դեղին, բաց դեղնականաչավուն գույնի, մանրացված հարդի հետ խառնված կավով, իսկ ներսը երեսպատված է կարմրավուն կավով, որը հղկված է փայտյա կամ ոսկրե քերիչով, իսկ արտաքին մակերեսները հարդարված են կոկիչով։

Կարասներից մեկի իրանի ուսերը զարդարված են կետավոր խաչապատկեր զարդով, որ արված է սեղմելով, իսկ նույն կարասի ներսում պահպանվել են կարմիր ներկի մնացորդներ։

Կճուճներն ունեն ուղիղ կտրված, գլանաձև բարձր վիզ, կլոր գնդաձև իրան, հարթ, երբեմն էլ կլոր հատակ։ Այս անկանթ կճուճների արտաքին և ներքին մակերեսները նույնպես երեսպատված են բուսական խառնուրդ պարունակող կավով, հղկված են ձեռքով կամ թաց խոտի միջոցով, իսկ մի քանի բեկորները հղկված են կոկիչով։ Բաց դարչնագույն, կարմիր գույնի կճուճների արտաքին մակերեսները կրակի վրա գրվելու հետևանքով խիստ մրոտված են, իսկ մեկի իրանի ուսերը ինչ-որ սուր գործիքի միջոցով զարդարված են սեղմումով արված կետավոր զարդով (աղ. II, նկ. 1, 6)։

Խոր թասերը (քրեղաններ) ունեն քիչ կորնթարդ, հատակի մասում սեղմված կողեր, ուղիղ կտրած շուրթ, հարթ հատակ, ներսի և դրսի մակերեսները նույնպես երեսպատված են մաքուր կավով և հղկված են թաց շորի կամ խոտի միջոցով։ Նրանց մակերեսներին նկատվում են ավազի խոշոր հատիկներ։

Բաց թասերն ունեն նուրբ ներճկված շուրթ, կողերը կորնթարդ իջնում են դեպի կլոր հատակը։ Սրանք իրենց տեսքով ավելի նուրբ են ու ավելի լավ մշակված։ Նրանցից մի քանիսը զարդարված են սեղմելու եղանակով արված կետավոր զարդով, իսկ մի քանի փոքրիկ թասերի հատակներին ներսի կողմից արված է փոքրիկ շրջանաձև փոսիկ (աղ. II, նկ. 7)։

Տապակարանները լայն հարթ հատակով, դեպի ներս ճկված կորնթարդ կամ դուրս ճկված ցածր կողերով, անմշակ կավից պատրաստված ամաններ են, որոնց արտաքին մակերեսները խիստ ճաքճքված ու մրոտված են, իսկ ներսի կողմը հարդարված է կոկիչով։ Շուրթերից ցած, կողերի վրա մի շարքով կան մանր անցքեր, իսկ շուրթին կպցված է դեպի ներս թեքված խոշոր ու կոպիտ կանթաձև ելուստը՝ բռնակը։ Այս տիպի ամանների բեկորները մեծ մասամբ հայտնաբերվում էին օջախների մոտ և իրենց չափերով ու ձևերով հիշեցնում են հաց թխելու համար օգտագործվող ամանները (սաջերը)։

Նույնատիպ հարդախառն ու ավազախառն կավից պատրաստված ամաններ հայտնի են Հայկական լեռնաշխարհի Ղազախի[30], Նախիջևանի

30 И. Г. Нариманов, Г. С. Исмайлов, նշվ. աշխ., էջ 169։



Ил. 11

Քյուլ-Թափայի[31], Մուգանի տափաստանի[32], Վանի[33], Մուշի, Խարբերդ-Մալաթիա·ի հուշարձաններից[34], ինչպես նաև Իրանական սարահարթի Գեոյ-Թեփեի —Մ շերտից, Պիչիլի-Թեփեի[35], Թեփե-Գավրայի 20—17-րդ շերտից[36], Հյուսիսային Միջագետքից[37], և Առաջավոր Արևելքի բազմաթիվ այլ հուշարձաններից։

Հարզախաոն և ավազախաոն կավից պատրաստված խեցեղենը մեծ հետաքրքրություն է առաջացնում նաև իր պատրաստման տեխնիկայով ու ձևերով։ Կավամանների մեծ մասը պատրաստված է ավազով լցված պարկի կամ ծղոտից գործած սալաների վրա, կավը ծեփելու եղանակով կամ կավաշաղախի բարակ ժապավենաձև գանգվածները իրար վրա գնելու և ձեռքով հարթելու միջոցով (աղ. IV, նկ. 1, 2)։

Կավամանների պատրաստման այս հնագույն մեթոդները հայտնի են գեռևս հին Եգիպտոսի ու Միջագետքից մ. թ. ա. V—IV հազարամյակներում, Թել-Հալաֆում[38], ինչպես նաև Սիրիա-Կիլիկյան նեոլիթյան հուշարձաններում, Մերսինի XXVI շերտում[39], Անդրկովկասում գործածվածքի դրոշմներով կավամանների բեկորներ հայտնաբերվել են Կիլիկ-դաղում[40], Աղստևի բնակատեղիում[41]։

Սաքուր կավից պատրաստված ամանները ներկայացված են շատ սահմանափակ քանակով և ձևերով։ Առանց կանթերի փոքրիկ գավաթները, տակառաձև ամանները, բարձր վզով գեղեցիկ սափորներն ունեն բաց ղարշնագույն, դեղնակարմրավուն և կայծքարի գույնի մակերեսներ, բարձրորակ թրծման և տքնաջան մշակման հետևանքով նրանք ստացել են շքեղ տեսք։

Սափորներն ունեն բարակ, նուրբ դուրս ճրկված շուրթ, բարձր գլանաձև բերանի մասում լայնացող վիզ, ուռուցիկ երկարավուն իրան, փոքրիկ հարթ հատակ (տե՛ս աղ. II, նկ. 2, 4)։

Գավաթները բարակ, նուրբ դուրս ճկված շուրթով, երկթեք իրանով, փոքրիկ հարթ հատակով ամաններ են, որոնց մակերեսները խնամքով կոկված ու փայլեցված են (աղ. II, նկ. 3)։ Տակառաձև ամանը ունի փոքրիկ հարթ հատակ։ Արտաքին մակերեսը փայլեցված է, իսկ ներսի մասում նկատվում են կավաշաղախի իրար վրա դրված շերտերը (աղ. II, նկ. 5)։

Շքեղ տեսքով, անգարդ խեցեղենի նմուշները իրենց կառուցվածքով ու մշակման կատարելությամբ առանձնանում են հուշարձանի մասսայական կավամաններից և աղերսվում են ուշ հալաֆյան և հյուսիս-օրեյդյան մշակութային հուշարձաններից հայտնի կավամանների հետ։ Նման կավամաններ մենք տեսնում ենք Թել-հալաֆում[42], Մերսինի հալաֆյան (19-րդ) շերտում[43] և Շամիրամալթիում[44]։

Այս տիպի խեցեղենը, ինչպես տեսնում ենք, չի ընդհանրացվում Թեղուտի հուշարձանի մասսայական խեցեղենի հետ և ըստ երևույթին այստեղ է թափանցել հյուսիս-միջագետքյան հուշարձաններից։

Պետք է նշել, որ Թեղուտի հուշարձանի խեցեղեն իրերի մեջ հայտնաբերվեցին նաև սև գույնի ավազախաոն կավից պատրաստված կավամանների շատ սահմանափակ թվով բեկորներ, որոնք իրենց կառուցվածքային ձևերով հիշեցնում են Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան խեցեղենը։ Սակայն նրանք չունեն կավաշաղախի մշակման և կավամանների պատրաստման այն կատարելությունը, որը հատուկ է Շենգավիթի, Քյուլ-Թափայի, Շրեշ-բլուրի խեցեղենին։

Սրանք ներկայացված են մի քանի բեկորներով, որոնցից լայնաբերան կճուճի մասերն ունեն բարձր գլանաձև վիզ, թույլ երևացող շուրթի պսակ, իրանը վզի մոտից լայնանալով իջնում է դեպի փոքրիկ հատակը։ Արտաքին մակերեսը հարդարված է թաց շորի օգնությամբ, կոտրվածքում անհավասար թրծման հետևանքով ունի մուգ գույն։ Մյուս բեկորը ամանի իրանի մաս է, որի վրա նկատվում են սեղմումով արված զարդեր, իսկ երրորդը փոքրիկ կճուճի ներճկված հատակի մաս է։

Թեղուտում վերը նշված խեցեղենի հայտնաբերումը մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ

31 Օ. Ա. Աբիբուլաև, նշվ. աշխ., СА, 1965, № 3, էջ 162—163։

32 Ա. Ա. Իսսեն, Из исторического прошлого Мильско-Карабахской степи, МИА, № 125, էջ 12։

33 Ե. Սամվելյան, նշվ. աշխ., էջ 135։

34 C. A. Burney, Eastern Anatolia in the chalcolitic and early bronze age, „Anatolian studies", vol. VIII, էջ 160—161։

35 Robert H. Dyson J. R. and Gouler Young, նշվ. աշխ., էջ 24։

36 Tobler Arthur, նշվ. աշխ., էջ 131—135։

37 L. Perkins, սշվ. աշխ., էջ 22։

38 V. Oppenheim, Tell-Halaf, I, Berlin, 1943, տախտ. XXV, № 6, 9։

39 J. Garstang, սշվ. աշխ., էջ 19 և նկ. 7, № 10։

40 Б. Куфтин, Триалети, Тбилиси, 1941, էջ 107։

41 Н. Г. Нариманов, Г. С. Исмайлов, նշվ. աշխ., էջ 151։

42 V. Oppenheim, սշվ. աշխ., տախտ. XIV, № 11 և XXV, № 1, 2։

43 J. Garstang, սշվ. աշխ., նկ. 72, № 22։

44 Ե. Սամվելյան, նշվ. աշխ., էջ 135։

մ. թ. ա. III հազարամյակում մեծ կատարելության հասած խեցեղենը սկիզբ է առնում IV հազարամյակի ինչ որ մի հատվածում, Հայկական լեռնաշխարհում, արդեն նստակյաց երկրագործությամբ և անասնապահությամբ զբաղվող ցեղերի մոտ։ Նոր փաստերի ու նյութերի հետագա լրացուցիչ ուսումնասիրությամբ կարելի է հաստատել, որ Արարատյան դաշտը այս խեցեղենի արտադրության ամենահին օջախն է։

Պեղումների հետևանքով հայտնաբերվեցին նաև վաղնջական ժամանակների երկրագործությամբ զբաղվող ժողովուրդներին հատուկ, Առաջավոր Ասիայում և Հին Արևելքում լայն տարածում գտած գունազարդ կավամանների բեկորներ։ Սրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ ավազախառն ու մաքուր կավից պատրաստված գունազարդ ամանների բեկորներ և հարդախառն կավից պատրաստված ամանների բեկորներ։

Ավազախառն կավից պատրաստված գունազարդ բեկորներն իրենց բնորոշ կառուցվածքային ձևերով ու կավամանի մակերեսների մշակման կատարելությամբ չեն առանձնանում հուշարձանի մասսայական խեցեղենից։ Նրանց դարչնագույն, բաց կարմիր երեսպատված մակերեսներին սև կամ մուգ դարչնագույն ներկով արված են բավականին բարդ զարդարանքներ։ Գունազարդ բեկորներից երկուսը առանց շուրթի, պսակի բարձր վզով, ուռուցիկ իրանով կճուճների մասեր են, որոնց վիզը զարդարված է վերևից ներքև իջնող ալիքաձև սև գծերով, իսկ իրանների ուսերը՝ ոսմբաձև քառանկյունիների շարքով, որոնք լցված են ցանցապատկեր գծերով (աղ. III, նկ. 1, 2)։

Բաց կարմրավուն ավազախառն կավից պատրաստված մի այլ փոքրիկ ամանի վիզը և իրանի ուսերը զարդարված են հորիզոնական լայն, փայլուն կարմիր գույնի ժապավենով, որից ներքև են իջնում մի քանի ուղիղ հաստ կարմիր գծեր, ամանին տալով շքեղ տեսք (աղ. III, նկ. 3)։ Նույնպիսի մի այլ փոքրիկ կավամանի բաց կարմրավուն մակերեսը զարդարված է փայլուն կարմիր ներկով արված կախված կիսաօղակների շարքով (աղ. III, նկ. 4—8)։

Այս գունազարդ կավամանների զարդամոտիվներն իրենց համադրման ատաղձն ունեն Վանի[45], Հալաֆի[46], Խարբերդ-Մալաթիայի[47], Կիլիկիայի Ցումուկ-Թեփե —2[48] և այլ հուշարձաններում։

Ավազախառն գունազարդ կավամանների բեկորների մեջ առանձնակի տեղ է գրավում դեղնակաթնավուն երեսպատումով համահավասար թրծված բեկորը։ Նրա արտաքին մակերեսն ապակենման հարթ է և փայլուն, վրան սև ներկով նկարված է հորիզոնական դիրքով ոսմբ, ըստ երևույթին ոսմբերի շարք է եղել, որը չի պահպանվել։ Այս բեկորը ոչ մի ընդհանրություն չունի հուշարձանի մյուս խեցեղենի հետ և իր որակով կապվում է Հալաֆյան և հյուսիս-օրեյգյան մշակույթին[49] (աղ. III, նկ. 9)։

Գունազարդ խեցեղենի նմուշների մեջ բավական մեծաքանակ են նաև հարդախառն կավից պատրաստված կավամանների բեկորները։ Նրանք ունեն համահավասար թրծվածք, արտաքին մակերեսները երեսպատված են մանրացված հարդի հետ խառնված դեղին, դեղնականաչավուն ծածկոցով, որոնց վրա սև ներկով տարված են վերևից ներքև իջնող ալիքաձև գծեր։

Բացի վրձինի օգնությամբ արված գունազարդումներից, Թեղուտի երկրագործները կավամանների վրա ներկ են քսել նաև քարե կոկիչով։ Այդ են վկայում ինչպես կավամանների մի քանի բեկորների վրա եղած գունազարդումների հետքերը, այնպես էլ կարմիր ներկի մնացորդների հետքով կոկիչները։

Թեղուտի գունազարդ կերամիկայի զարդամոտիվների ընդհանուր կոմպլեքսում ընդգծվում է մշակութային երկու ուղղությունների առկայությունը. մի կողմից ակնհայտ է տեղական էնեոլիթյան խեցեղենը իր ուրույն զարդամոտիվներով, մյուս կողմից առկա են հյուսիս-միջագետքյան մշակույթին հատուկ զարդամոտիվները։ Նման հանգամանքը նկատի ունենալը անշուշտ կնպաստի հուշարձանի թվագրման գործին։

Կավը Թեղուտի բնակիչները օգտագործել են ոչ միայն բնակարաններ կառուցելու, կավամաններ պատրաստելու, այլև պաշտամունքային օջախի հենակներ ու կենդանիների արձանիկներ պատրաստելու համար։ Այդ են վկայում № 7 կացարանից հայտնաբերված պաշտամունքային օջախի հենակները և № 3 կացարանում գտնված կենդանու փոքրիկ արձանիկը (աղ. I, նկ. 24)։

Թեղուտի հուշարձանի թվագրման համար կարևոր նշանակություն ունի նրա հնագիտական մնացորդների՝ խեցեղենի, աշխատանքային գործիքների, բնակարանային կոմպլեքսների համադրումը Հայկական լեռնաշխարհի ու նրա շրջապատի մշակութային հուշարձանների հետ։ Հուշագրավ է, որ Թեղուտի խեցեղենի որոշ մասը՝ շքեղ սափորներն ու բարձրորակ գունազարդ իրերը, իրենց պատրաստման ձևով, մշակումով,

---

45 Խ. Սամվելյան, նշվ. աշխ., նկ. 42, № 5, 6։

46 V. Oppenheim, նշվ. աշխ., տախտ. XXII, № 14 և IX, № 3։

47 C. A. Burney, նշվ. աշխ., էջ 116, նկ. 2։

48 J. Garstang. նշվ. աշխ., էջ 89, նկ. 53, № 2։

49 L. Perkins, նշվ. աշխ., նկ. 5, № 18։



Աղ. III

կատարելագործման աստիճանով ու զարդամոտիվներով համապատասխանում են գիտության կողմից V հազարամյակով թվագրվող հալաֆյան մշակույթին։ Հալաֆյան խեցեղենի բեկորներ, նույնպես սահմանափակ քանակով, հայտնաբերվել է նաև Նախիջևանի Քյուլ-Թափայի առաջին շերտից, որտեղ 18—20 մ խորությունից վերցված ածուխը Լենինգրադի հնագիտության ինստիտուտի լաբորատորիայի անալիզներով տվել է այդ շերտի հետևյալ թվագրումը՝ ЛЕ 477—5770—90 տարի, այսինքն 3807—90 թթ. մ. թ. ա.[50]։

Հալաֆյան մշակութային մյուս հուշարձանը Հայաստանում Շամիրամալթին է Վանա լճի ափին, որի երրորդ շերտը ուսումնասիրողների կողմից ճանաչված է որպես տիպիկ հալաֆյան մշակույթ[51]։

Այնուհետև ուշագրավ է Թեղուտի հուշարձանի և հյուսիս-օրնյղյան մշակութային ազդեցություն ունեցող հուշարձանների հնագիտական մնացորդների համադրումը։ Թեղուտից հայտնաբերված հարդախառն, լավ թրծված խեցեղենը, ինչպես նաև բնակարանաշինարարական ձևերն իրենց ուղղակի զուգահեռներն ունեն Թեփե-Գավրայի

[50] А. А. Иессен, նշվ. աշխ., էջ 12։

[51] R. Braidwood, B. Howe, Prehistoric Investigations in Iraqi Kurdistan, Chicago, 1960, էջ 33, J. Mellaart, Earliest civilizations of Near East, 1965, էջ 120 և ուրիշներ։



Աղ. IV

XIX—XVII դդ. շերտերում, որոնք թվագրված են որպես հալաֆյան մշակույթից օբեյդյանին անցման շրջանի շերտեր։ Սրանց թվագրումը ռադիո կարբոն 14-ի մեթոդով ունի հետևյալ թվականը՝ 3446—3255[52]։

Անցնելով հյուսիս-օբեյդյան այլ հուշարձանների համադրմանը, պետք է նշել Իրանական սարահարթում Սոլդուզի հովտում գտնվող Պիչիլի-թեփեն, որի հնագիտական մնացորդները գիտության կողմից ճանաչված են որպես ուշ հալաֆյան և վաղ օբեյդյան ժամանակաշրջանի մշակույթ։ Նրա խեցեղենի բազմաթիվ նմուշները և աշխատանքային գործիքները հար և նման են Թեղուտից հայտնաբերվածներին։ Հետաքրքիր է, որ Պիչիլի-թեփեի ռադիո կարբոն 14-ի անալիզը տվել է 3500—160 թթ. մ. թ. ա.[53]։

Իրանական սարահարթում այս ժամանակաշրջանի մյուս հուշարձանը Գեոյ-թեփեի—Մ շերտն է, որը գիտության կողմից ժամանակագրված է Իրաքի հյուսիս-օբեյդյան հուշարձանների հետ։ Այստեղ էլ հայտնաբերվել են Թեղուտի խեցեղենին և աշխատանքային գործիքներին նման առարկաներ, ինչպես քարից, այնպես էլ պղնձից։

Արարատյան դաշտում, բացի Թեղուտի բնակատեղիից, հարդախառն խեցեղենի նմուշներ հայտնաբերվեցին նաև էջմիածնի Քյուլ-թափայի

[52] Robert H. Dyson J. R. and Gouler Young, նշվ. աշխ., էջ 26։

[53] Նույն տեղում, էջ 26։

տերիտորիայից. Մաղկունք գյուղի մոտ գտնվող Մրխլ-թափա կոչվող բլուր-բնակատեղիից, Զբվարթնոցի շրջակայքից, Վ. Խաթունարխ գյուղի հյուսիսային մասի աղուտային հողերի տերիտորիայից և այլ վայրերից։

Ինչպես տեսնում ենք, V—IV հազարամյակներում Հայկական լեռնաշխարհի այն վայրերը, որտեղ բնակլիմայական պայմանները հնարավորություններ են ընձեռել վաղ երկրագործական տնտեսության կազմակերպման համար, ըզբաղեցված են եղել նստակյաց արտադրող երկրագործությամբ և անասնապահությամբ զբաղված տոհմերի կողմից, որոնք կապերի մեջ են եղել հյուսիս-միջագետքյան և օրեյդյան ցեղերի ու տոհմերի հետ, կազմելով Առաջավոր Արևելքի վաղ երկրագործական մշակույթի անբաժանելի մասը։ Սակայն, ինչպես ճիշտ նկատում է Հ. Ա. Մարտիրոսյանը, Հայկական լեռնաշխարհի այս ժամանակաշրջանի մշակույթը չի կրկնում առաջավորասիականը, այլ ներկայացնում է միասնական զարգացման բազմաթիվ ինքնուրույն գծեր ունեցող տնտեսական ամբողջություն, որը իր հետագա զարգացման նոր որակն է գտնում մ. թ. ա. III հազարամյակի բարձր զարգացման հասած մշակույթում։

Ելնելով հնագիտության կողմից լավ ճանաչված ու ժամանակագրված առաջավորասիական մշակութային վերը նշված կենտրոնների հետ Թեղուտի հուշարձանի նյութերի համադրումից, մենք կարող ենք ասել, որ բնակատեղին գոյություն է ունեցել ուշ հալաֆյան և հյուսիս-օրեյդյան մշակութային երկարատև ժամանակաշրջանի ինչ որ մի հատվածում, այսինքն մ. թ. ա. V հազարամյակի վերջում և IV հազարամյակի կեսին։

Ռ. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

Հունգարիայի ակադեմիան չունի արևելագիտական ինստիտուտ։ Արևելագիտության, այդ թվում նաև Հայագիտության ուսումնասիրությունը իրականացվում է Բուդապեշտի Համալսարանում։ Հայագիտության ուսումնասիրությունը արտաքսահմանում սովորաբար տարվում է մշակույթի և արվեստի պատմության կամ հեղինվրոպագիտության հետ միասին։ Սակայն մեզ մոտ, Հունգարիայում, Հայագիտությամբ զբաղվում ենք այլ նպատակներով, քան մյուս երկրներում։ Հայագիտության վերակենդանացումը Հունգարիայում վերջին տասնամյակներում պայմանավորված է «ազգային» գիտությունների, ավելի ճիշտ՝ Հունգարիայի վաղ պատմության հետազոտման պահանջներով։ Այս պարագան, անշուշտ, մեզանում սմուր հնարավոր է սահմանել Հայագիտության համար, որովհետև գրանով վերջին դարձել է մեր «ազգային» գիտության զարգացմանը օժանդակող գիտական կարևոր մի բնագավառ։

Բացի այդ, Հունգարիայում Հայագիտության զարգացմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ ժամանակին մեր երկրում շատ հայեր են ապրել, որոնց մեծ մասը, գլխավորապես մրցավարականները, հաստատվել են Բուդապեշտում։ Ասածնանարար նրանք ձուլվել են տեղացիների մեջ, մոռացել իրենց մայրենի լեզուն և դարձել հայկական ծագում ունեցող հունգարացիներ։ Հայերը զգալի դեր են խաղացել Հունգարիայի պատմության մեջ, մասնակցել նրա պաշտպանությանը ոտար հարձակումներից։ Ուստի և նրանց պատմությունը նաև մեր երկրի պատմությունն է։ Բնականաբար, մեզ համար չափազանց կարևոր է հունգարահայ գաղթականների պատմության ուսումնասիրման գործը։ Սակայն ամենագլխավորն այն է, որ առանց հայ ժողովրդի, աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի պատմության ուսումնասիրման անհնարին կլինի գաղափար կազմել արևելյան քաղաքակրթության մասին, որ առանց հայկական աղբյուրների չի կարելի ամբողջացնել Մերձավոր Արևելքի, Փոքր Ասիայի և Կովկասի բազմադարյան պատմությունը։ Շատ դժվար է պատկերացնել, թե ինչպես պետականությունից շատ վաղուց զրկված, ոտար բարբարոս տիրապետության տակ ընկած մի ժողովուրդ կարողացել է ստեղծել և պահպանել այդպիսի հսկայական գրականություն, մեծ պատմագրություն, որը կարող է շարժել շատ և շատ ժողովուրդների բարի նախանձը։

Հայագիտությունը Հունգարիայում բավականին տրադիցիաներ ունի։ Գեռևս անցյալ դարում մեզանում լույս են ընծայվել հայագիտական գրքեր և «Արմենիա» անունով ամսագիր։ Վերջին հունգարերեն լեզվով հետաքրքրական նյութեր էր հրապարակում հայերի, նրանց պատմության ու մշակույթի մասին։ Սրանից վաթսուն տարի առաջ պրոֆեսոր Լուկաս Պատրուբանյան Բուդապեշտի Համալսարանում վեց տարի շարունակ դասավանդել է հայոց լեզու։ Սակայն նրանից հետո երկար ժամանակ այդ ուղղությամբ մեզ մոտ ոչինչ չի արվել։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կրկին հետաքրքրություն արթնացավ Հայագիտության նը-